

modernization of manufacturing base in the sphere of production and services which will create preconditions for the development of small and medium business.

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Յ. Ս. ԶԱՔՈՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,  
ԳՊՀ պրոֆեսոր*

**Ռ. Կ. ԱՍԱՏՐՅԱՆ**

*ԳՊՀ «ՁՏԿ» մասնագիտությամբ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի*

Ցանկացած պետության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում ապրանքադրամական հարաբերությունների առաջացումը և պետության գոյությունը այն հիմնական նախապայմաններն են, որոնց հիմքի վրա ձևավորվել են ֆինանսական հարաբերությունները: Ժամանակակից շուկայական տնտեսությունն էլ ավելի է ընդլայնում ֆինանսների գործողության շրջանակները, մեծացնում դրանց դերը: Դրան զուգահեռ՝ ամեն քայլափոխի բազմաթիվ անհատներ կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ առնչվում են ֆինանսական համակարգի ծառայությունների հետ: Այդ պատճառով ֆինանսների մասին նրանց ունեցած գիտելիքները պետք է գտնվեն բավարար մակարդակի վրա՝ հնարավորություն տալով ընդունել ավելի հիմնավորված որոշումներ շուկայական հարաբերությունների ներկայիս բարդ պայմաններում:

Վարչահրամայական տնտեսության փլուզումից և անկախության հռչակումից հետո Հայաստանը, գտնվելով տնտեսության անցումային շրջանում, զերծ չմնաց ֆինանսական շուկայի զարգացմանը վերաբերող խնդիրներից:

Խորհրդային տարիներին լայն տարածում ստացած դրամը «բարձի տակ» պահելու սովորությունը, «խնայդրամարկը»-ում ներդրված ավանդների հատուցման հետ կապված քաշքշուկներն ու անորոշությունը և անկախության առաջին տարիներին խաբված ավանդատուների կարգավիճակում հայտնվածների թվի ավելացումը նվազեցրին անկախ Հայաստանի ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը, որը մասնակիորեն վերականգնվեց նախ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի (գործում է 2005թ-ից) և այլ իրավական ակտերի հիման վրա հիմնադրամ, ապա «Ֆինանսական հաշտարարի գրասենյակ» ստեղծելով:

Սակայն խնդիրը այսօր էլ չի կարելի լուծված համարել, քանի որ դեռևս մեկ օրում կարող է տեղի ունենալ ազգային դրամի փոխարժեքի կտրուկ տատանում (2009թ-ի մարտի 3-ին հայկական դրամի նկատմամբ ազատ փոխարկելի արտարժույթները թանկացան ավելի քան 20%-ով, իսկ դրան նախորդող օրերին

անհնարինի չափ դժվարացել էր այդ արտարժույթներ ձեռք բերելը), ինչը հանգեցնում է ազգային արժույթի հանդեպ վստահության կորստի: Նույն ազդեցությունն է ունենում արտարժույթով վարկեր տրամադրելու վարկատուների ձգտումը՝ նույնիսկ այն վարկառուներին, որոնց գործունեությունը կապված չէ արտաքին առևտրի հետ:

Բացի այդ, խիստ սահմանափակ են անկանխիկ դրամաշրջանառություն իրականացնելու հնարավորությունները: Վերջինս հատկապես տեսանելի է ՀՀ մարզերում, որտեղ թե՛ տեխնիկական միջոցներով հագեցվածությունը, թե՛ բնակչության տեղեկացվածության աստիճանը բավականին հետ է մնում մայրաքաղաքից:

Տարբեր ճանապարհներով օրըստօրե ավելանում է բանկային պլաստիկ քարտ ունեցողների թվաքանակը, սակայն դրանք ձեռք բերողներից շատերը մանրամասն ծանոթ չեն տվյալ քարտի օգտագործմանն առնչվող պայմաններին (Visa, ԱրՔա, Master...): Պլաստիկ քարտերի կիրառման ընթացքում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ: Մասնավորապես խոսքը վերաբերում է նրան, որ որոշ դեպքերում քարտերի միջոցով գումար կանխիկացնելիս պահվում են տոկոսներ: Իսկ ամեն անգամ բանկին տոկոսավճարներ թողնելը չի բխում քարտապանի շահերից:

Բացի այդ, ՀՀ բնակավայրերի գերակշռող մասում, հատկապես գյուղական, չկան բանկոմատներ կամ POS տերմինալներ կիրառող առևտրի և սպասարկման օբյեկտներ, և գումար կանխիկացնելու համար քարտապանը ստիպված է լինում հասնել մոտակա քաղաք: Ստացվում է, որ պարտադրաբար գյուղաբնակ մանկավարժներին և այլ վարձու աշխատողներին աշխատավարձային պլաստիկ քարտեր տրամադրելով ավելացվում են բանկերի եկամուտները: Փոխարենը, պլաստիկ քարտ օգտագործողների հիմնական մասը ոչ միայն շահավետ ձեռքբերումներ չի ունենում, այլև ստիպված է լինում աշխատավարձից մաս հանել բանկին, ինչպես նաև կատարել լրացուցիչ տրանսպորտային ծախսեր՝ իր աշխատավարձը կանխիկացնելու համար:

Տրամաբանական կլիներ, որ աշխատավարձային պլաստիկ քարտեր տրամադրող բանկերը պարտավորվեին քարտապանների բնակավայրերում տեղադրել բանկոմատներ կամ, որ ավելի կարևոր է, օժանդակեին POS տերմինալների կիրառմանը: Վերջինս ոչ միայն կթեթևացներ քարտապանների հոգսը, այլև պետությանը հնարավորություն կտար բարձրացնելու դրամաշրջանառության արդյունավետությունը և գործուն պայքար ծավալել ստվերային տնտեսության դեմ:

Մեր երկրում ֆինանսական համակարգի հետ առնչվող խնդիրներից է համարվում նաև այն երևույթը, որ շատ հաճախ վարկառուները կնքում են վարկային պայմանագրեր՝ առանց ընթերցելու դրանցում առկա դրույթները և անտեղյակ լինելով պայմանագրի բովանդակությանը, ստորագրում են դրանք: Բայց երբեմն վարկառուն չի կարդում պայմանագիրն այն պատճառով, որ դրանք լավ չեն մատուցվում նրան: Մի շարք դեպքերում հատկապես պայմանագրի կարևորագույն կետերը գրված են լինում մանր տառերով կամ հղումների տեսքով՝ նվազագույնի հասցնելով հաճախորդի հնարավորությունը տեղեկանալու այդ, այսպես կոչված, «ոչ կարևոր կետերին»: Իսկ ֆինանսական իրազեկվածության պակասն էլ նպաստում է հաճախորդի ֆինանսական տեսանկյունից ոչ

ճիշտ վարքագծի դրսևորմանը: Հետագայում այդ «ոչ կարևոր կետերի» պատճառով առաջացող խնդիրները հանգեցնում են ֆինանսական համակարգի նկատմամբ բնակչության վստահության կորստի:

Հայաստանում բավականին ցածր է բնակչության տեղեկացվածությունը արժեթղթերի շուկայի մասին: Նույնիսկ նրանց հիմնական մասը դժվարանում է գնահատել արժեթղթերի նկատմամբ սեփական վստահության մակարդակը, ինչը ևս ոչ բավարար ֆինանսական կրթվածության արդյունք է:

Բավարար չեն պատկերացումներն ու մեծ չի վստահությունը նաև ապահովագրական ծառայությունների նկատմամբ: Բնակչության շատ քիչ տոկոսն է օգտվում դրանցից, եթե չհաշվենք 2010թ. օրենքի ուժով պարտադրված «Ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը» (ԱՊՊԱ):

Նշված պայմաններում անհրաժեշտություն է դառնում ֆինանսական համակարգի նկատմամբ սպառողների վստահության բարձրացման ապահովումը, որին հասնելու համար կարևորվում է ոչ միայն պետական միջամտությունը, այլև բնակչության ֆինանսական կրթությունը:

Ֆինանսական ոլորտից տեղյակ և կիրթ հասարակություն ունենալը հիմնական նախապայմանն է՝ համակարգի կանոնավոր գործունեությունն ապահովելու համար: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաները զարգանում են կայծակնային արագությամբ: Ուստի ֆինանսական գրագիտության դերը տեղեկատվության տարածման էլեկտրոնային համակարգում էլ ավելի է կարևորվում:

Ելնելով այս և օբյեկտիվ այլ պատճառներից՝ միջազգային ասպարեզում սպառողների ֆինանսական կրթվածությանը վերագրված է կարևորագույն դեր՝ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացման տեսանկյունից: Այս հարցով զբաղվում են ինչպես պետություններն առանձին-առանձին, այնպես էլ միջազգային տարբեր կազմակերպություններ, ինչպիսիք են CitiGroup-ը, VISA-ն, MasterCard-ը և այլն:

Օրինակ, CitiGroup-ը այդ նպատակով 10 տարվա ընթացքում 200 մլն դոլար է ներդրել աշխարհի 100 երկրներում ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված տարբեր ծրագրերում, ընդ որում 2,5 մլն՝ Ռուսաստանում: VISA-ն ևս այս ուղղությամբ բավականին մեծ աշխատանքներ է կատարել Ռուսաստանում, մասնավորապես բնակչության լայն խավերի համար VISA-ի վեբ կայքում ստեղծել է «Իմ խելացի դրամները» վերնագրով բաժին, երեխաների համար նախաձեռնել է համակարգչային տարբեր խաղեր, իսկ ուսանողների համար՝ հատուկ կրթական սեմինարներ<sup>1</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, բացի ֆինանսական կազմակերպություններից, ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացման գործում կարևոր տեղ են զբաղեցնում նաև տարբեր երկրների կողմից առաջադրված պետական ծրագրերը: Մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունը նմանատիպ ծրագրերին հատկացրել է 100 մլն դոլար, որից 10 մլն համաշխարհային բանկի միջոցներից՝ որպես 5 տարվա ծրագիր: Ավստրալիայում դեռևս 2005թ-ից գործում է Ֆինանսական գրագիտության հիմնադրամը: Անգլիան տարեկան 20 մլն դոլար է հատկաց-

<sup>1</sup> Աղբյուրը՝ [www.uba.am](http://www.uba.am)

նում բնակչության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերին<sup>2</sup>:

Ըստ որոշ փորձագետների կատարած ուսումնասիրությունների՝ ֆինանսական գրագիտության պակասը մեր ժամանակների խնդիրն է նույնիսկ ԱՄՆ-ին ման «ֆինանսական գայլ» երկրում: Այդ իսկ պատճառով այստեղ ֆինանսական ծառայությունների ամերիկյան ասոցիացիայի նախաձեռնությամբ 25 ոչ առևտրային կազմակերպություններ հատուկ կոալիցիա են ստեղծել՝ ֆինանսների բնագավառում բնակչությանն օգնելու նպատակով: Հիմնական «թիրախային խումբը» աճող սերունդն է՝ սկսած մանկապարտեզների սաներից մինչև 12-րդ դասարանների աշակերտները<sup>3</sup>:

Հաշվի առնելով միջազգային փորձը՝ Հայաստանում ևս անհրաժեշտ է ստեղծել հատուկ բնակչության ֆինանսական իրազեկվածության բարձրացմանն ուղղված նպատակային հիմնադրամ, որը զգալիորեն կարող է բարելավել վիճակը մեր երկրում, նաև կնպաստի ֆինանսական շուկայում բնակչության ակտիվության բարձրացմանը:

Քանի որ ՀՀ բնակչությունն առավել հաճախ օգտվում է բանկերի կողմից առաջարկվող ֆինանսական ծառայություններից, ուստի շատ արդյունավետ կլինի, եթե բանկերը կազմակերպեն սեմինար-քննարկումներ ուսանողների և առանձին համայնքներում՝ մարդկանց տարբեր տարիքային խմբերի համար:

Բնակչության ֆինանսական գրագիտությունը կարելի է բարձրացնել նաև պարբերաբար բնակչությանը անվճար բաժանվող բուկլետների միջոցով, որոնք կպարունակեն տեղեկատվություն ֆինանսական համակարգի կարևորագույն տարրերի, բնակչության ֆինանսական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Անհրաժեշտ է նաև բնակչությանը մատչելի ինֆորմացիա տալ ֆինանսական գործիքներից ավելի էֆեկտիվորեն օգտվելու եղանակների մասին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Հայաստանը պետք է հետևի միջազգային լավագույն փորձին ու իրականացնի ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրեր: Այդ գործին էապես կնպաստի հանրակրթական դպրոցներում «Քաղաքացիական իրավունքի հիմունքներ» և «Տնտեսագիտության հիմունքներ» առարկաների խորացված ուսուցումը:

## **THE OPPORTUNITIES OF INCREASING CONFIDENCE TO FINANCIAL SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA**

*H. S. ZAKOYAN  
R. K. ASATRYAN*

Essential changes were took place in the financial system of RA during the transition period of economy. Interrelation between financial organizations and their customers were improved gradually through applying achievements of high technologies as well. As a result, nowadays are existing new credits prac-

<sup>2</sup> Աղբյուրը՝ [www.uba.am](http://www.uba.am)

<sup>3</sup> Աղբյուրը՝ [www.sobesednik.am](http://www.sobesednik.am)

tice with less risky for lenders and more responsible for borrowers, big enough number of bank plastic card holders, but the problem of confidence's lack of the sector is not solved yet.

In order to solve this problem it's offered to establish ATM (automatic teller machine) and to assist spreading POS terminals (which is more important) in the settlements of plastic card holders, as well as to implement the projects aimed to increase financial awareness of the population.

## **ВОЗМОЖНОСТИ УВЕЛИЧЕНИЯ ДОВЕРИЯ К ФИНАНСОВОЙ СИСТЕМЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Г. С. ЗАКОЯН  
Р. К. АСАТРЯН**

В финансовой системе РА произошли существенные изменения в период экономического перехода. Постепенно усовершенствовались взаимоотношения между финансовыми организациями и их клиентами, употребляя также достижения высоких технологий. В итоге теперь имеем новую практику кредитования с более низким кредиторским риском и с более высокой ответственностью заемщика, довольно большое количество пользователей банковских пластиковых карт, но проблема недостаточного доверия к сектору еще не решена.

Для решения этой проблемы предлагается банкам устанавливать банкоматы и способствовать распространению POS терминалов (что более важно) в поселениях владельцев пластиковых карт, а также осуществлять целевые программы направленные на увеличение финансовой осведомленности населения.

## **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՅՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Հ. Ս. ԶԱՔՈՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*

*ԳՊՀ պրոֆեսոր*

**Ս. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*«Գարանտ ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ մասնագետ*

**Գ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**

*ԳՊՀ մագիստրատուրայի I կուրսի ուսանող*

Հայտնի է, որ ներկայումս մոլորակի բնակչության շուրջ 13%-ը թերսնված է ապրում<sup>1</sup>: Չնայած դրան՝ երկիր մոլորակի բնակչությունը տարեցտարի ավելանում է՝ իր հետ բերելով պարենային ապրանքների նկատմամբ պահանջարկի անընդհատ աճ:

Վերը նկարագրված պատկերը ստիպում է գյուղատնտեսական մթերքների

<sup>1</sup> <http://usa.wfp.org/news-story/what-you-need-know-about-hunger-2012>